ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար մետաղադրամների գլանափաթեթաթղթեր ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության CBA-2022-007 ծածկագրով հրապարակային մրցույթ կազմակերպելու մասին

2022-03-21

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար մետաղադրամների գլանափաթեթաթղթեր ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության CBA-2022-007 ծածկագրով հրապարակային մրցույթ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ բանկի կարիքների համար մետաղադրամների գլանափաթեթաթղթեր մատակարարող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն ծանուցմամբ սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հայերեն լեզվով, թղթային ձևով, ՀՀ կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, հասցեով (մուտքը Դեղատան փողոցից):

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև 2022թ. ապրիլի 21-ը ժամը 15:30-ն:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու 2022թ. ապրիլի 21-ին ժամը 16:00-ին:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2022թ. ապրիլի 28-ին ժամը 16:00-ին:

Մրցույթին մասնակցելու ծանուցումը հրապարակված է ՀՀ կենտրոնական բանկի

ինտերնետային կայքում ( ): Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի Գնումների Համակարգման ծառայություն, էլ. Փոստ՝ :

21.03.2022թ.
ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն